մարդուն սուրը իրեն դարձնել, նոյնպէս ազատութիւն խոստացաւ այն տաճիկ գլխաւորաց, որ եկեր էին իւր վրայ պատերազմելու. բայց երբ հայոց ազատաց առջին կանգնեցաւ՝ եւ նոցայ մէջ Վասակ Կովակերն տեսաւ, իւր ահագին ձայնը բարձրացուց եւ գոռաց.

— Դուք, անօրէն անզգամներ, դուք ձեր ազգին դէմ՝ ձեր եղբարց դէմ ձեռք կը վերցնէք եւ ինձմէ գթութիւն կը սպասէ՛ք. ճշմարիտ է, որ ես զինաթափ մարդիկ չեմ կրնար սպաննել, իմ սուրս զինուորի է եւ ոչ դահճի, ուստի ձեզ ձեր եղբարց դատաստանին պիտի յանձնեմ: Ահա ժողովուրդը՝ գեղացին կ'ուգայ, ձեզ իրենց կ'ատամ, ինչպէ՛ս կ'ուզեն թո՛ղ ընեն, կ'ուզեն ձեզ սպաննեն, կ'ուզեն ձեր կեանքը շնորհեն… Իսկ դու, Վասա՛կ, նախատինք Արծրունեաց, Մերուժաններու վիժեալ, որ եւ ոչ մատնիչ եւ դաւաճան լինելու չափ ուղեղ ունիս, քեզ կը շնորհեմ քու այդ անպիտան կեանքդ, վասնզի ապուշ ես եւ ցնորեալ: Գնա՛ Կայէնի թափառական կեանքը՝ վարէ, խաղալիք եւ նշաւակ եղիր ամէնուն. վասնզի զօրավար Վասպուրականի ինքզինքդ անուանելեն վերջ այդ միայն կը պակսէր, որ Վասպուրականի արիւնարբու թշնամեաց հետ միաբան՝ գայիր քու ազգիդ դէմ անպիտան զէնքերդ շարժէիր:

Նոյն միջոցին կը հասնէին հայ գիւղացիք իրենց խառնիխուռն զինուորութեամբ եւ զինուք. թէպէտ վրէժ եւ կատաղութիւն իրենց աչաց մէջ կը փայլէր՝ բայց երբ տեսան Գուրգէն, որ արդէն ամէն բերան Վասպուրականի փրկիչ կ'անուանէր, մոռցան իրենց դառնութիւնը եւ միաբերան սկսան աղաղակել. «Կեցցէ՛ Գուրգէն, կեցցէ՛ մեր ազատարարը»: Իսկ Վասպուրականի ազատաց խումբին դաւաճանք այն միջոցին Գուրգէնի մօտեցած իրեն գթութեան կ'ապաւինէին, որ չի մատնէ զիրենք ժողովրդեան կատաղութեան: Գուրգէնի սիրտը փափուկ էր նոյնչափ՝ ինչչափ խիստ էր բազուկը: Ուստի ներեց եւ հրամայեց անվնաս արձակել: Եւ դառնալով Բուղայի զօրավարին՝ ըսաւ.

— Գնա՛ զրուցէ քու տիրոջդ, որ ես աւաւակներէ եւ երկոտանի գազաններէ կը մաքրեմ երկիրը, օրինաւոր տէրանց հնազանդիլ